Հավելված N 2
ՀՀ կառավարության 2023 թվականի
սեպտեմբերի 7-ի N 1519-Ն որոշման

«ՄԱՔՍԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ 270-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ 1-ԻՆ ԿԵՏՈՎ ԵՎ 276-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ 1-ԻՆ ԿԵՏՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ ՀԱՎԱՍՏՈՂ ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1. «Մաքսային կարգավորման մասին» օրենքի 270-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և 276-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված պահանջների պահպանումը հավաստվում է՝

1) սանիտարահիգիենիկ պատշաճ պայմանների, ինչպես նաև սույն որոշման N 1 հավելվածի 10-րդ կետով նախատեսված պահանջների պահպանումը՝ Հայաստանի Հանրապետության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից, իսկ սննդամթերքի անվտանգության պահանջների պահպանվածության վերաբերյալ տեղեկատվությունը իրավաբանական անձի կողմից ներառվում է համապատասխան ռեեստրում ընդգրկման նպատակով մաքսային մարմին ներկայացվող դիմումի մեջ.

2) շինությունների պահպանության պահնորդաազդանշանային և հրդեհային անվտանգության կանոնների, ինչպես նաև շինությունների նպատակային նշանակությամբ շահագործման անվտանգության պահանջների պահպանման ոլորտներում՝ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կողմից:

2. Սույն հավելվածի 1-ին կետով սահմանված՝ պահանջների պահպանման հավաստումն իրականացվում է իրավաբանական անձանց կողմից ժամանակավոր պահպանության պահեստների և մաքսային պահեստների ռեեստրներում գրանցվելու համար դիմումի ներկայացման ժամանակ, ինչպես նաև տարեկան պարբերականությամբ՝ մինչև յուրաքանչյուր տարվա առաջին եռամսյակի ավարտը:

3. Սույն որոշման 1-ին կետով սահմանված՝ պահանջների պահպանման հավաստումն իրականացվում է նույն կետում նշված մարմինների կողմից անցկացվող հետազոտության կամ ստուգման արդյունքներով՝ նույն մարմինների կողմից տրամադրված եզրակացությունների հիման վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

07.09.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ